

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/1

3 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Դեղաբազա Երևան» ՍՊԸ 02.10.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.09.2015 թ-ի թիվ 5011408 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 26.02.2015 թ-ի թիվ 5011408 հանձնարարագրի համաձայն «Դեղաբազա Երևան» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.09.2015 թ-ի թիվ 5011408 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 26.860.550 դրամ: Ընկերության բողոքը վերաբերվում է Ակտի 1-ին կետով և 4-րդ կետի 2-րդ ենթակետով արձանագրված խախտումների հիմքով լրացուցիչ առաջադրված պարտավորություններին:

Նշվեց նաև, որ «Դեղաբազա Երևան» ՍՊԸ կողմից նաև հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.09.2015 թ-ի թիվ 5011408 ակտը մասնակի՝ ակտի 1-ին կետով և 4-րդ կետի 2-րդ ենթակետով արձանագրված հիմքերով լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու մասերով անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 08.10.2015 թ-ի թիվ ՎԴ/5380/05/15 որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Դեղաբազա Երևան» ՍՊԸ 02.10.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Դեղաբազա Երևան» ՍՊԸ 02.10.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այս ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ